Հնախօսն Հայաստանի (Ինճիճեան) Գ. 307. Ձիրուանի համար ասէ. «Աշխարհագրութեան Խորենացւոյն թուղթ 30, գրի Ձիրուան. բայց ամեն արեւելեան մատենագիրք, ընդ որս և Մասուտի, վկայեն թէ՝ այս էր անուն նախնի Ալպանիոյ (Աղուանից), և սկսաւ ի գործ ածել առ տէրութեամբ թագաւորին Պարսից անուանեալ Խոսրով Նուշիրվան, որ էր ի մէջ անդ վեցերորդ դարու, ուստի և զկնի Խորենացւոյն։

Կ. Պոլսեցի Գէորգ դպրի Պարսկերէն բառարանի մէջ (1826 յերես 370) գրի, «Ձիրվան է անուն հռչակաւոր գաւառի, որ մերձ ի ծովն Կասպիական, որոյ և քաղաքն Ձիրվան կոչի։

Աղուանից աշխարհի սահմանքն են թէ ի հնումն և թէ ի նորումն՝ յարեւելից՝ Կասպից ծովը. ի հարաւոյ՝ Երասխ գետը. յարեւմտից՝ Կուր գետը. և հիւսիսոյ՝ Կովկասու լերանց վերջին լեռնաշղթայն, որ վերջանում է Դարբանդ քաղաքի մօտ, Սամուր գետով։

Ինչպէս Հայոց աշխարհի՝ նմանապէս և Աղուանից աշխարհի սահմանքն որոշեց և արձաններով հաստատեց Հայոց Արտաշէս Ա. թագաւորը. որից երեւում է, որ Հայաստանի արեւելեան սահմանն էր Կուր գետը, սկսած Աղսթափայ գետի Կուրի խառնուրդից մինչեւ Կուր գետի Երասխին խառնուելը, ըստ այսմ Աղուանից աշխարհի արեւմտեան սահմանն է Կուր գետը, թէ և երբեմն (երրորդ դարում) Աղուանից թագաւորներն՝ Հայոց թագաւորաց ներելմն թէ անհոգութեամբն անցել են Կուր գետը, և Պարտաւ քաղաքը շինելով յամին 500, Կուր գետի աջակողմում արեւմտեան եզրին՝ իշխել են մեծ դաշտին բաղասական (Մուղան[1]) և հասել են մինչեւ Արցախի և Գանձակի լեռներն. իսկ Աղուանից աշխարհի արեւելեան սահմանն է Կասպից ծովը, հարաւայինը Երասխ գետը, որ ընդմիջում է Հայաստանի Փայտակարան նահանգը և քաղաքը՝ որ է Լանքարան, և հիւսիսայինն Դարբանդ քաղաքը՝ որ համարվում էր դուռն ձորոյ՝ որ է Ձուրայն. ըստ այսմ Աղուանից աշխարհի սահմանն է

---

[1]) Մխիթար Այրիվանեցին գրէ "Բառանայ դաշտն Մուղանն է„. 82։